գ) Գեղարվեստական արտահայտչամիջոցները

Ավելորդ չէ այս ենթագլխի հենց սկզբում նշել, որ Դավրիժեցին օժտված է եղել նաև բանաստեղծական շնորհքով, և նրա անունով պահպանվել է երկու տաղ՝ «Տաղ վասն Մահրամայի» և «Տաղ վասն սրբոյ Աստուածածնի, ի Թէրվիզցի Առաքել վարդապետէ ասացեալ», որոնք զետեղված են «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» ժողովածուի երկրորդ հատորում[19]: Ճիշտ է, դրանք չունեն գեղարվեստական մեծ արժեք, բայցևայնպես՝ ցուցանում են պատկերավոր ու գեղեցիկ խոսք կառուցելու Դավրիժեցու վարպետության ոչ պատահականությունը: Այնպես որ՝ «Գիրք պատմութեանց» աշխատությունում գեղարվեստական արտահայտչամիջոցների բավականին հարուստ համակարգն օրինաչափ է:

Դավրիժեցին տիրապետում է պատկերավոր խոսքի հիմնական նրբություններին: Կարելի է բազմաթիվ հատվածներ մեջբերել նրա պատմագրքից, որոնք գեղարվեստական վարպետ խոսքի իսկական օրինակներ են: Ինչպես՝ «Եւ իբրև հողմախառն հուր ընդ եղէգն ընթացեալ, հապճեպ տագնապաւ վաղվաղակի զամենայն

---

[19] Տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» (XVI–XVII դդ), հատոր 2, Երևան, 1987, էջ 256-259: Ի դեպ, երկրորդ տաղը երկար ժամանակ ներկայացվել է իբրև Առաքել Սյունեցու հեղինակած գործ: